ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԶՊ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՍՄԻԿ ԲԵՑԲՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԱՐԳԻՇՏԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ԴՊՐՈՑ՝ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈԼԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ ԱԼՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՄԱՐՏՈՒՆԻ **2023**թ

Բովանդակություն

Ներածություն ---------- էջ 3

Գրականության ակնարկ----------էջ 5

Հետազոտության ընթացք----------էջ 14

Տվյալների մշակում և վերլուծություն----------էջ 19

Եզրակացություն----------էջ 21

Գրականության ցանկ----------էջ 22

Դասապլան-1.....էջ 23

Դասապլան-2.....էջ 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քանի որ ուղեղը ի վիճակի չէ ուշադրություն դարձնել անեն ինչի, ոչ հետաքրքիր ձանձրալի կամ էմոցիոնալ մռայլ դասերը պարզապես չի հիշում:Լ էլլիսոն:

Ժամանակակից արագ զարգացող և փոփոխվող աշխարում փոխվել է նաև սովորողների հետաքրքրությունների շրջանակը, այն ավելի լայն է դարձել: Նրանցից յուրաքանչյուրն ունի տեղեկատվություն ստանալու մեծ հնարավորություն, ուստի ուսուցիչներից մեծ ջանք, գիտելիք,մեթոդական հմտություն է պահանջվում սովորողներին մոտիվացնելու, նրանց ուշադրությունը կենտրոնացնելու, ստեղծագործական միտքն ու երևակայությունը խթանելու համար:

Այս հետազոտության արդյունքում փորձ է արվում պարզել, որ ժամանակակից ակտիվ մեթոդների ճիշտ ընտրության, պլանավորված և կազմակերպված կիրառման դեպքում հնարավոր է լուծում տալ վերը նշված և այլ արդի խնդիրների, ըստ այդմ էականորեն բարձրացնել ուսուցման արդյունավետությունը: Ավանդական մեթոդները ենթադրում են ուսուցանվող նյութի պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրում: Իհարկե սա շատ կարևոր մեթոդ է, սակայն,իմ դիտարկմամբ այս մեթոդով աշակերտների մի փոքր հատված կարող է հետաքրքրվել և վերարտադրել դասը հաճախ առանց անհրաժեշտ կարողունակությունների ձեռք բերման:

Հետազոտության ընթացքում թիրախավորում եմ այն սովորողներին, ովքեր ավանդական մեթոդով անցկացվող դասի ժամանակ պասիվ են: Պարզվում է ակտիվ մեթոդների կիրառման պարագայում նրանք ինտեգրվում են խմբային աշխատանքներում, առաջարկում են մտքեր, փորձում են օգնել խմբի մյուս անդամներին՝ հատկապես երբ ուսուցիչը խրախուսում է նրանց ցանկացած ակտիվություն:

Հետազոտության արդյունքում պարզվում է, որ եթե դասը անցկացվում է նաև ժամանակակից մեթոդների համադրմամբ, որոնց հիմքում ընկած է սովորողների ակտիվ մասնակցությունը դասպրոցեսին, այստեղ

մեծանում է նրանց նախաձեռնողականությունը, խթանվում է ստեղծագործական միտքը, երևակայությունը:

ՈՒսումնասիրության արդյունքում անհրաժեշտություն եղավ ծանոթանալ բազմաթիվ ինտերակտիվ մեթոդների, որոնք այնքան շատ են ու բազմաբովանդակ: Ընտրվեցին և կիրառվեցին այնպիսի մեթոդներ, որոնք նախապես կանխատեսվել էին, որ տվյալ թեմային կլինեն ավելի կիրառելի և արդյունավետ:

Հետազոտության արդյունքում պարզվում է, որ այսպիսի մեթոդների կիրառումը դասպրոցեսին միտված է ոչ միայն սովորողներին տալ գիտելիքներ, այլև նրանց մոտ զարգացնել այնպիսի առանցքային կարողունակություններ, ինչպիսիք են ինքնադրսևորումն ու ինքնաճանաչողությունը: Սովորողների միջև ձևավորվում է համագործակցային և կառուցողական մթնոլորտ:

2 ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հանրակրթական դպրոցի և ուսուցչի առջև այսօր բազմաթիվ խնդիրներ են ծառացած, ուստի անհրաժեշտ է փնտրել ուղիներ ցանկացած առարկայի ուսուցման գործընթացն առավել գրավիչ, արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու համար: Դասապրոցեսին անհրաժեշտ է ընտրել այնպիսի մեթոդներ, որոնք կսովորեցնեն նյութի յուրացման ընթացքում ակտիվացնել, ընտրել, կազմակերպել, միավորել և կիրառել սովորածը:

Դասավանդումը ոչ միայն արվեստ է, այլ նաև արհեստ, և ինչպես յուրաքանչյուր արհեստ, ունի իր հնարքներն ու հնարամտությունները, եղանակներն ու մեթոդները: Դասի որակի բարելավումն իրականացվում է ուսուցման ձևերի, մեթոդների, հնարների կատարելագործման, կրթական տեխնոլոգիաների միջոցով:

ՈՒսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխազդեցությունն է, որի օգնությամբ տեղի է ունենում գիտելիքների, կարողությունների, հմտությունների փոխանցում մի անձից մյուսին կամ մյուսներին Рептикова 2016: Այլ կերպ ասած՝ ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար, հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և սովորողի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներից ճիշտ օգտվելու կարողությունն է: Նա պետք է խուսափի գիտելիքների ձեռքբերման անարդյունավետ ճանապարհներից և օգտագործի առավել արդյունավետ եղանակների առավելությունը: Իսկ դրա համար նպատակահարմար է, որ ուսուցիչը ծանոթ լինի, թե ինչպես է ընթանում ուսումնական գործընթացը, կատարի եզրահանգումներ՝ հիմնված իր անձնական փորձի վրա:

Մանկավարժական գրականության մեջ ուսուցչի և աշակերտի ակտիվության աստիճանից կախված, որպես ուսուցման մեթոդներ տարբերում են պասիվ, ակտիվ և իմերակտիվ (այլ կերպ փոխներգործուն) մեթոդներ https/ /ru.wikipedia/ Методы обучения: ՈՒսուցման պասիվ մեթոդներն օգտագործելիս դասավանդման ընթացքում առաջնայինը ուսուցչի դերն է: ՈՒսուցչի համար բավականին բարդ խնդիր է ամբողջ դասաժամի ընթացքում սովորողների ուշադրության կենտրոնացած պահելը: ՈՒսուցիչն այս դեպքում տեղեկատվություն հաղորդողն է, իսկ աշակերտն այդ տեղեկատվության ընդունողը:

Իմ մանկավարժական գործունեության ընթացքում նմանատիպ դասապրոցեսներ հաճախ են կազմակերպվել: Այս դեպքում առաջանում է աշակերտների ներգրավվածության և մոտիվացիայի խնդիր, որոնք հետագայում բերում են ուսուցման առաջադիմության նվազման: Այս մեթոդով դասավանդման ընթացքում հաշվի չեն առնվում աշակերտների անձնական հատկանիշների և կարողունակությունների տարբերությունները, ուսուցիչ–աշակերտ կապը խիստ սահմանափակ է: Աշակերտները գրեթե զրկվում են ահատական ստեղծագործական դրսևորումներից՝ խթանվում է միայն սովորողների մեխանիկական հիշողությունը և վերարտադրումը:

Ժամանակակից աշխարհը դիտարկում է կրթությունը՝ որպես քաղաքական, տնտեսական, ազգային, կրոնական հակասությունների մեղմման միջոց՝ ընդլայնելով մարդկանց և խմբերի միջև երկխոսության հնարավորությունը: Հետևաբար, հանրակրթության կարևոր նպատակներից պետք է դիտարկել համագործակցության,փոխօգնության պատրաստ անձի ձևավորումը: Այժմ աշխատաշուկայում ևս կարևորվում են այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ հաղորդակցվելու, համա-գործակցելու, նոր իրավիճակներում կողմնորոշվելու հմտությունները: Կրթությունը պետք է համահունչ լինի կյանքին:

Կարինե Բաբայան: Մանկավարժություն, գիտամեթոդական ամսագիր, թիվ 1, 2016թ., էջ 48-50

3

Մանկավարժության մեջ ուսուցման ինտերակտիվ մեթոդների կողմնակիցներ են եղել Պեստալոցցին, Կոմենսկին, Հեգելը: Մեթոդի մասին կարելի է տեղեկություններ գտնել նաև անտիկ դարաշրջանի փիլիսոփաների մոտ: Թիմային աշխատանքի կարեվորությունը հայտի է դեռ հին ժամանակներից: Մի քանի պատմաբաններ և մարդաբաններ կարծում էին, որ մարդկային էվոլուցիայի հիմնական պատճառներից մեկը հենց համագործակցային ունակությունն է: Պատմության ընթացքում մշակվել են համագործակցային ուսուցման տարբեր առարկաներ: Օրինակ Սոկրատեսն իր աշակերտներին կրթում էր փոքր խմբերում: 16-րդ դարում այս միտումը սկսեց կիրառվել պաշտոնական կրթության մեջ:Առաջին մանկավարժներից մեկը, ով հիմք դրեց համագործակցային համակարգին Զարլզ Գիդն էր: Ավելի ուշ 19-րդ դարում թիմային ուսուցումը հատուկ արդիականություն ստացավ հատկապես միացյալ նահանգներում: Օրինակ Ամերիկացի փիլիսոփա Ջոն Դիվին ստեղծեց մանկա-վարժության համակարգ՝ հիմնված համագործակցության վրա: 20-րդ դարի գիտական ակադեմիական ուսումնասիրությունը սկսեց մտահոգվել խմբի ներսում տեղի ունեցող տարբեր գործընթացներով, նրանց մեջ էր նաև համագործակցային ուսուցումը: Ըստ Պիագետի սովորողները, երբ ենթարկվում են իրենց գաղափարներից բացի այլ մտքերին կզգան անհավասարակշռություն, որը նրանք պետք է հաղթահարեն, կառուցելով ավելի բարդ ու կայուն մտքեր:Հետևաբար համագործակցային ուսուցման հիմնական առավելությունը կլինի համատեղ կառուցումը նոր գիտելիքներ և ուսուցում, որոնք ձեռք են բերվում համագործակցային ուսուցման գործընթացից հետո:

Այս մեթոդները ենթադրում են աշակերտների մոտիվացիայի բարձր աստիճան, ինքնուրույնության դրսևորում, խնդիրների լուծման պրոցեսում:

Ուսուցման ինտերակտիվ մեթոդներով դասավանդման դեպքում ուսուցման

գործընթացի բոլոր մասնակիցները, այդ թվում նաև ուսուցիչը փոխադարձաբար ներգործում են միմիանց

վրա: Այս մեթոդները կոչված են խթանելու աշակերտների ինքնուրույնության զարգացումը և սեփական ուսումնառության համար պատասխանատվության աստիճանական ստանձնումը: Այս դեպքում ոչ միայն ուսուցիչն է ներգրավում աշակերտներին դասավանդման գործընթաց, այլ նաև աշակերտներն են սովորում միմիանցից: ՈՒսուցման գործընթացը դառնում է դասավանդողի և սովորողների բազմակողմանի ,միմիանց հետ փոխկապակցված ակտիվ նպատակաուղղված փոխազդեցություն, որի ընթացքում սովորողները բացի ուսումնառությունից ձեռք են բերում նաև հասարակական փորձ վարքի և գործունեության դրսևորումների համար: (Шутова 2016):

Ինտերակտիվ մեթոդներով ուսումնառության ընթացքում բացի գիտելիք ձեռք բերելուց աշակերտները ձեռք են բերում անկախ մտածելակերպ համբերություն, հանդուրժողականություն, պատասխանատու և սատարող մոտեցում(Մերինի և Այլք 2006):

Այն օգնում է՝

- զարգացնել քննադատական մտածողությունը և դատողությունը,
- նպաստում է սովորողների ինքնագնահատականի բարելավմանը,
- խթանում է անձնական պատասխանատվության զարգացումը, քանի որ սովորողներից յուրաքանչյուրի աշխատանքը կազդի մյուսների աշխատանքի վրա,
- բարելավում է հասակակիցների հարաբերություն
- բարձրացնում է սովորողների սպասելիքները սեփական աշխատանքների արդյունքների վրա:

ՈՒսուցչի պարտականությունները ներառում են ուսումնական նյութի Մանրակրկիտ պատրաստում և դասի կառավարում, թեմայի դասավանդման ամենահարմար մեթոդի ընտրություն:

Այսպիսով ավարտելով ուսուցման տարբեր մեթոդների ուսումնասիրությունը, կարելի է եզրակացնել, որ դասավանդման պրոցեսում ուսուցման ակտիվ կիրառումը դարձել է օրվա հրամայական:

Այն արդյունավետ կիրառելու համար ուսուցիչը պետք է ունենա անհրաժեշտ գիտելիք և հմտություն յուրաքանչյուր թեմայի ուսուցման համար ընտրելու ճիշտ մեթոդներ և միջոցներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- խթանել սովորողների ակտիվությունը և առաջադիմությունը,

▪ ներգրավել դասին թույլ սովորողներին ,

▪ ձևավորել միջանձնային հարաբերությունների մշակույթ,

▪ ուսուցման գործընթացը դարձնել առավել ակտիվ ու հետաքրքիր,

▪ նպաստել կրթության որակին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

– ուսումնասիրել հիմնախնդրի վերաբերյալ մեթոդական գրականություն,

– ապահովել նպաստավոր միջավայր՝ գիտելիքներն ու կարողունակություն-յունները դրսևորելու համար,

– խթանել սովորել սովորեցնելու կարողունակությունը

–գրանցել առաջադիմության շարժը

–դիտարկել ինտերակտիվ մեթոդներով անցկացվող դասերը՝ նշելով առավելություններն ու թերությունները:

Հետազոտության վերջնարդյունքում ակնկալում եմ ստանալ հետևյալ հարցերի պատասխանները՝

–ուսուցման նմանօրինակ մեթոդի կիրառմամբ կհաջողվի՞ հետաքրքրա-սիրություն առաջացնել ուսումնասիրվող նյութի նկատմամբ,

– ինչպե՞ս իրենց կդրսևորեն թույլ աշակերտները,

– դասի ընթացքում կհաջողվի՞ ձևավորել վստահության և համագործակցային հարաբերություններ թիմի անդամների միջև,

– դասը կհասնի՞ իր տրամաբանական ավարտին:

Համատեղ ուսուցումը հիմնված է այն գաղափարի վրա,որ սովորելը սոցիալական գործողություն է, որի ընթացքում մասնակիցները խոսում են միմյանց հետ՝ Գերլախ:

Ժամանակակից կրթական համակարգում սովորողն իր պահանջմունքներով, հետաքրքրություններով կրթական գործընթացի ակտիվ մասնակիցն է: Ինտերակտիվ մեթոդների ձևերի ու միջոցների շնորհիվ ուսուցման գործընթացը համահունչ է ժողովրդավարական հասարակության արժեքներին, որի շնորհիվ հնարավոր է դաստիարակել հարգանք մարդկանց ընդունակությունների և տարբերությունների յուրաքանչյուրի մտքի ու գաղափարի նկատմամբ:

Համագործակցային ուսուցման տարբերն, ըստ Ջոնսոնների չորսն են՝

1, դրական փոխկախվածություն,

2 անհատական հաշվետվություն և պատասխանատվություն

3 միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ,

4 խմբային գործընթացի մշակում :

Հետագայում այդ տարրերին ավելացվեց ևս 1-ը: Պասի Սահլբերգը փոխներգործուն /ինտերակտիվ/ առաջադրանքները դիտարկում է որպես համագործակցային ուսուցման 5-րդ տարր:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար:

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը:

Համագործակցությունը ստեղծում է ինքնահանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները:

Համագործակցային ուսուցումը հիմնված է մի շարք արժեքների և հիմքերի վրա.

· Ակադեմիական կատարողականի բարձրացում. սա ձեռք է բերվում խմբի տարբեր անդամների օգնությամբ, հիմնվում է օգնության և փոխօգնության վրա:

· Խմբային աշխատանք. սովորողը ավելի շատ բան է սովորում խմբում աշխատելով, քան անհատապես:

· Միջանձնային հարաբերությունների ձևավորում. այս հարաբերությունները ծառայում են որպես ուսուցման նոր եղանակների հիմք կամ ծագում:

· Սոցիալականացում և ինտեգրում

.համագործակցային ուսուցումը սոցիալականացման և ինտեգրման գործընթաց է, որն համարվում է

- երեխաների և դեռահասների կրթական գործընթացի առանցքային գործիք:

ՀԱՆԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

– Վստահություն

– Հանդուրժողականություն

– Ինքնագիտակցություն

– Պատասխանատվություն

Ուսուցման կարևոր բաղադրատարրեր են նաև անդրադարձը /ռեֆլեքսիան/ և հետադարձ կապը , որոնց նպատակն է հետահայաց հիշել, հասկանալ, գիտակցել, իմաստավորել կատարած աշխատանքների տեսակները, եղա–նակները, խնդիրները, դրանց լուծման ուղիները, ստացված արդյունքները, ձեռքբերումները, եզրահանգումներ անել, սահմանել հետագա աշխատանքի նպատակները, կառուցել սեփական կրթական ուղին:

Հետազոտությունների հիման վրա Ջոնսոնները և Հոլուբեկը առանձնացնում են հետևյալ կարևոր ձեռքբերումները՝

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը,
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը,
- հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովումը,
- սթրեսի հաղթահարումը:

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2–4 անդամ: Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է՝

1. խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,
2. պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը,
3. բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,
4. յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

Որպես հետազոտության օբյեկտներ՝ ընտրեցի 9^{ա} և 9^{բ} դասարանները: Հիմնական անհանգստությունս այն էր, որ գործ ունեի տարբեր հետաքրքրություններ, անձնային որակներ կրող սովորողների հետ և դժվար էր կանխատեսել համագործակցային ակտիվ մեթոդներով ուսուցման կազմակերպումը այս դասարաններում կնպաստե՞ր ուսուցման արդյունավետության բարձրացմանը, թէ՝ ընդհակառակը:

Դասարանում սովորում են տարբեր կարողունակություններով օժտված աշակերտներ, և կա նրանց ներգրավվածության, փոխհամագործակցության խնդիր: Ընդգրկելով սովորողներին խմբային աշխատանքում՝ փորձեցի հատկապես թույլ ընդունակություններով աշակերտներին մասնակից դարձնել դասին:

Խմբերը ձևավորեցի պահպանելով դասարանի ուժեղ և թույլ սովորողների համամասնությունը՝ խմբերում

ստեղծելով աշխատանքի հետևյալ իրավիճակը՝ համագործակցային աշխատանք նույն թեմայով:

Դասերը պլանավորելիս առաջնորդվել եմ ԽԻԿ համակարգի հետևյալ սկզբունքներով՝

· ուսումնական պարապմունքը դարձնել առավել հետաքրքիր, ստեղծել մոտիվացիա՝ նպաստելով սովորողների ներգրավվածությանը դասա-պրոցեսին /խթանման փուլ/, կիրառել եմ մտագրող մեթոդը,

· ուսուցումը կառուցել առանցքային խնդիրների և դրանց լուծման շուրջ /իմաստի ընկալման փուլ/,

· սովորողների ինքնակառավարմամբ նպաստել նրանց կշռադատելու կարողության զարգացմանը /կշռադատման փուլ/:

Ելնելով առաջադրված նպատակից՝ առանձնացրել եմ մի քանի կարևոր գործնական քայլեր՝

1 ուսումնաօժանդակ մի քանի մեթոդների և հնարների կիրառում,

2 դասի ընթացքում համապատասխան, պաստառների կիրառում,

4 արդյունքների գնահատման համար հայտորոշիչ թեստերի, ինքնա-գնահատման, փոխադարձ գնահատման կիրառում, ելքի քարտի լրացում,

5 արդյունքների վերլուծություն,

6 փորձարարական դասերի վարում,

7 ձեռքբերված փաստերի վիճակագրական վերլուծություն

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Որպես հետազոտության օբյեկտներ՝ ընտրեցի 9ա և 9բ դասարանները: Հիմնական անհանգստությունս այն էր, որ գործ ունեի տարբեր հետաքրքրություններ, անձնային որակներ կրող սովորողների հետ և դժվար էր կան-խատեսել համագործակցային մեթոդներով ուսուցման կազմակերպումը այս դասարաններում կնպաստեր ուսուցման արդյունավետության բարձրացմանը, թէ՝ ընդհակառակը:

Դասարաններում սովորում են տարբեր կարողունակություններով օժտված սովորողներ, և կա նրանց ներգրավվածության, փոխհամագործակցության խնդիր: Ընդգրկելով սովորողներին խմբային աշխատանքում՝ փորձեցի հատկապես թույլ ընդունակություններով աշակերտներին մասնակից դարձնել դասին:

Խմբերը ձևավորեցի պահպանելով դասարանի ուժեղ և թույլ սովորողների համամասնությունը՝ խմբերում ստեղծելով աշխատանքի հետևյալ իրավիճակը՝ համագործակցային աշխատանք նույն թեմայով:

Դասերը պլանավորելիս առաջնորդվել եմ ԽԻԿ համակարգի հետևյալ սկզբունքներով՝

- ուսումնական պարապմունքը դարձնել առավել հետաքրքիր, ստեղծել մոտիվացիա՝ նպաստելով սովորողների ներգրավվածությանը դասա-պրոցեսին /խթանման փուլ/, կիրառել եմ մտագրող մեթոդը,
- ուսուցումը կառուցել առանցքային խնդիրների և դրանց լուծման շուրջ /իմաստի ընկալման փուլ/,
- սովորողների ինքնակառավարմամբ նպաստել նրանց կշռադատելու կարողության զարգացմանը /կշռադատման փուլ/:

Ելնելով առաջադրված նպատակից՝ առանձնացրել եմ մի քանի կարևոր գործնական քայլեր՝

1 ուսումնաօժանդակ մի քանի մեթոդների և հնարների կիրառում,

2 դասի ընթացքում համապատասխան, պաստառների կիրառում,

4 արդյունքների գնահատման համար հայտորոշիչ թեստերի, ինքնա-գնահատման, փոխադարձ գնահատման կիրառում, էլքի քարտի լրացում,

5 արդյունքների վերլուծություն,

6 փորձարարական դասերի վարում,

7 ձեռքբերված փաստերի վիճակագրական վերլուծություն:

Հետազոտական 1-ին դասը անցկացրեցի 9ա դասարանում, դասի թեման էր Հաղթական ճակատամարտեր /տես Հավելված 1/: Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդման:

Ուսումնական պարապմունքին իրականացրի խմբային հետազոտություն համագործակցային մեթոդով, ընթացքում կիրառեցի խմբավորում, զրույց, խմբային աշխատանք: Գործածեցի զննական պարագաներ՝ դասագիրք, պաս-տառ,տեղեկատվական նյութեր համացանցից:

Ձևավորեցի համապատասխան 5 խումբ՝ պահպանելով ուժեղ և թույլ սովորող աշակերտների համամասնությունը: Խմբերին ներկայացրի ուսումնասիրման ենթակա նյութը և բացատրեցի աշխատանքի ընթացքը, ինչպես նաև գնահատման տեսակն ու չափանիշները:

Խթանման փուլում մտագրոհի միջոցով փորձեցի ակտիվացնել աշակերտներին: Գրատախտակին գրեցի հաղթանակ բառը, խմբի յուրաքանչյուր անդամի առաջարկվեց մեկ բառ կամ բառակապակցություն գրառել այս բառի հետ կապված, որի միջոցով փորձեցի պարզել աշակերտների մտքում առաջացած զուգորդումները, այնուհետև յուրաքանչյուր խումբ ներկայացրեց իրենց մտքերը:

Իմ կողմից խրախուսվեց ցանկացած միտք, որ կարող էին արտահայտել խմբի անդամները: Կարևոր էր, որ խմբի յուրաքանչյուր անդամ ամպայման մի միտք կամ բառ արտահայտեր,այնուհետև դասախոսության միջոցով ներկայացնում եմ նոր նյութը:

Իմաստի ընկալման փուլում կիրառում եմ խճանկարի մեթոդը:



Նյութի բովանդակությունը նախորդ բաժանում եմ փոքր հատվածների, ենթավերնագրելով դրանք: Այնուհետև բաժանում եմ խմբի անդամների միջև, այնպես որ միևնույն խմբի տարբեր անդամներ ունենան նյութի տարբեր հատվածներ ուսումնասիրելու առաջադրանք: Տալիս եմ ժամանակ նյութը ուսումնասիրելու համար, ընթացքում ակտիվ համագործակցում եմ խմբերի հետ: Այնուհետև առաջարկում եմ խմբերին

վերադասավորվել այնպես, որ նոր ձևավորված խմբերում անդամների ուսումնասիրված նյութի հատվածները նույնը լինեն: Առաջարկում եմ խմբի անդամներին միասին քննարկել ուսումնասիրած նյութը, այնուհետև խմբի յուրաքանչյուր անդամ մյուսների աջակցությամբ և իր մանակցությամբ պետք է լրացնի ԳՈՒՍ՝ գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի աղյուսակը: Այնուհետև կշռադատման փուլում առաջարկվում է խմբերի անդամներին իրենց թերթիկներով վերադառնալ նախկին խմբերը: Այստեղ մեծ պաստառների վրա գրված է լինում ընդհանուր նյութի վերնագիրը և աղյուսակը՝ գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի, որը լրացվում է խմբի յուրաքանչյուր անդամի օգնությամբ:Աշխատանքի վերջում յուրաքանչյուր խումբ ներկայացնում է պաստառը, նշելով յուրաքանչյուր անդամի ներդրումը: Իմ մասնակցությամբ քննարկում ենք գիտեմ, սովորեցի բաժինները, վերջում անրադառնում եմ ուզում եմ իմանալ հարցերին:

Գնահատումը կատարվեց աշակերտների կողմից՝ ինքնագնահատման, իսկ իմ կողմից՝ ձևավորող գնահատման միջոցով:

Հետազոտական 2-րդ դասը անցկացրեցի 9ᴾ դասարանում, դասի թեման էր Մայիսյան հերոսամարտեր /տես Հավելված 2/: Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդում:

Դասն սկսեցի հարցուպատասխանի միջոցով՝ ամփոփելով նախորդ դասանյութը: Նոր նյութի ուսուցումը իրականացրի կարճ դասախոսություն մեթոդով:

Որից հետո Վենի դիագրամի միջոցով վեր հանվեց Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերի ընդհանրություններն ու տարբե-րությունները:



Մտագրոհը 'Մայիսյան հերոսամարտեր՝ վերնագրի վերաբերյալ խթանեց աշակերտների ակտիվությունը թեմայի նկատմամբ: Աշակերտները գրատախտակին անկաշկանդ գրեցին իրենց իմացածը, մտքերը, գաղափարները:

Իմաստի ընկալման փուլում դասարանը բաժանվեց 2 խմբի, որոնցից յուրաքանչյուրը անվանակոչվեց ըստ

իրենց տրված առաջադրանքների՝

ա/ թեման լուսաբանող և փաստերը ներկայացնող,

բ/ ցուցադրող և ամփոփող-արձանագրող:

1-ին խմբի հանձնարարությունն էր գտնել մի քանի հիշարժան կամ հետաքրքիր հատվածներ, բարձրաձայն ընթերցել, ճշել այդ հատվածների ընտրության պատճառն ու կարևորությունը:

2-րդ խումբը պետք է կազմեր ճակատամարտերի համառոտագրությունը, ներկայացներ սեղմ շարադրանքով:

Կշռադատման փուլում կիրառեցի մտածիր, զույգ կազմիր, հաղորդիր մեթոդը:

Այն իրականացրեցի հետևյալ մեթոդական հնարքների բայլերը՝ 1-ին փուլում սովորողներին առաջարկեցի ինքնուրույն մտածել իմ կողմից տրված առաջադրանքի շուրջ,

2-րդ փուլում առաջարկեցի զույգեր կազմել և քննարկել իրենց տեսակետները,

3-րդ փուլում զույգերն իրենց տեսակետներն ներկայացնում են ամբեզջ դասարանին:

Կատարվեց անրադարձ ելքի քարտերի լրացում

Այստեղ քարտերը լրացվում են 3-2-1 մեթոդով, որտեղ սովորողները գրում են

1 երեք բան որ սովորեցին այս դասի ընթացքում,

2 երկու բան որ կարևոր և արդյունավետ համարեվին,

3 մեկ բան որ իրենք կկիրառեն,

4 առաջարկություններ:

Հաջորդ դասաժամին ամփոփիչ միավորային գնահատումն իրականացրի գրավոր /հարցաշար / աշխատանքի միջոցով, որի արդյունքները ինձ գոհացրին:

Տվյալի մշակում վերլուծություն

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ տարաբնույթ խմբային աշխատանքների կազմակերպումը համագործակցային տարբեր մեթոդների միջոցով հետաքրքրություն է առաջացնում ուսումնասիրվող նյութիկատմամբ, խթան է հանդիսանում սովորողների ակտիվության, հետաքրքասիրության համար, զարգացնում ինքնահանաչողական, սովորել սովորելու կարողունակությունները, արժևորում յուրաքանչյուրի մասնակցային գործունեությունը. սա նոր կացութաձև էր դասարաններում, որը տարբերվում էր արդեն ավանդական դարձած անհատական ուսուցման ձևերից:

Խմբային աշխատանքի ժամանակ, երբ թույլ սովորող աշակերտին և ուժեղ կամ միջին սովորողին ընդգրկում ես միևնույն խմբում, թույլերն իրենց հույսը դնում են լավ սովորողների վրա,ուստի փորձարարական հետազոտության ժամանակ ընտրվել են այնպիսի մեթոդներ, որտեղ կատարվում է աշխատանքի բաժանում, որն էլ նպաստում է խմբի՝ հատկապես ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներիակտիվությանը

Իմ ուշադրությունը գրավեց և միաժամանակ ուրախացրեց հատկապես այն հարգանքի և փոխվստահության մթնոլորտը, որն ինքնաբուխ ստեղծվեց

աշխատանքների իրականացման ընթացքում, համատեղ աշխատելու՝ աշակերտների ոգևորվածությունը:

9-րդ դասարաններում իրականացված հետազոտական դասի 2 -րդ փուլում պասիվ աշակերտների ներգրավվածությունն ավելի ակնառու էր. հավանաբար աշակերտներն արդեն ծանոթ էին մեթոդին հատուկ իրավիճակներին: Սովորողներն ամբողջ դասապրոցեսն անցկացրին ինքնակառավարման միջոցով, և իմ մասնակցությունը գրեթե չկար: Նյութի ընկալումն իրականացվեց առանց իմ կողմից ակտիվ ուղղորդման / տես Դիագրամ 2 / :

Դիագրամ 2

Տվյալների մշակում 9-րդ դասարանում



1-փուլ	2—րդ փուլ
30	50
25	45
20	40
1 5	35

Մեթոդիկայի կիրառման ընթացքում ի հայտ եկած խնդիրները: Աշխատանքի մեկնարկից հետո հիմնական դժվարությունները կապված էին աշակերտների ձևակերպումների հետ: Կոռադատման փուլում ուղղորդված հարցադրումների միջոցով փորձում էի շտկել այդ թերացումը. հարցուպատասխանի ժամանակ նրանք առավել ակտիվություն էին ցուցաբերում:

Թերություններից էին նաև, որ երբեմն ժամանակի մեջ չէինք տեղավորվում: Ամփոփելու և եզրահանգումներ իրականացնելու համար հետազոտության վերջում կատարեցինք ինքնաանդրադարձ, որն աշակերտներից յուրաքանչյուրին հնարավորություն տվեց ներկայացնելու ստացած տպավորությունները և ամփոփելու դրանք էլի քարտերի մեջ:

Հարկ է նշել, որ աշակերտների և ուսուցչի կարծիքներն ու դիտարկումները տվյալ մեթոդի վերաբերյալ գրեթե համընկնում էին:

Եզրակացություն

Ամփոփելով իմ հետազոտական աշխատանքի արդյունքները՝ կարող եմ վստահաբար եզրակացություն անել, որ համագործակցային ակտիվ մեթոդները, մեթոդական հնարները չնայած իրենց մասնակի

թերություններին, արդյունավետ միջոց են դասը հետաքրքիր և բովանդակային կազմակերպելու համար: Դրանք հնարավորություն են ստեղծում խթանել թույլ սովորողների ներգրավվածությունը դասին, նպաստում են մի կողմից՝ համագործակցային, մյուս կողմից էլ մրցակցային հարաբերությունների դրսևորմանը դասարանում: Աշակերտները ձեռք են բերում հանդուրժելու, միմյանց հարգելու, լսելու, տարբեր կարծիքներ ընդունելու, միմյանց գնահատելու կարողություններ, որը ձևավորում և զարգացնում է նրանց գիտելիքները, այլ նաև արժեքային համակարգը: Համոզվեցի նաև, որ իմ աշակերտներն ունեն վերլուծելու, կապակցված խոսք կառուցելու, վստահ արտահայտվելու հատկություններ, պարզապես պետք է օգնել նրանց բացահայտելու սեփական հնարավորությունները :

Համարում եմ, որ իմ հետազոտական աշխատանքի ժամանակ իրականացրած դասերը հասան իրենց տրամաբանական ավարտին:

Գրականություն ցանկ

1. Բաղդասարյան Ա., Մանկավարժություն, գիտամեթոդական ամսագիր, թիվ 2, 2017

2. Կարինե Բաբայան, Մանկավարժություն, գիտամեթոդական ամսագիր, թիվ 1, 2016

3. Մերնեյի, Ա Սաբո, Վ Տակաչ, 101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար,Բուդապեշտ Հունգարիա վերցված է http.//Chexov.am/html/arachadranqner20102011 կայքից

4. Ջոն Դյուի, Դպիր, Դպրոցը և հասարակությունը, 1-9 համարներ

5. Կարինե Բաբայան: Մանակավարժություն, գիտամեթոդական ամսագիր, թիվ 1, 2016թ., էջ 48-50
3

6 Սերոբ Խաչատրյան՝ ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020,

7 Шутова, Г.(2016) ,,Активные и интерактивные методы обучения: обзор, классификации и примерию Что такое активные и интерактивные методы обучения на уроке". Получено с http://pedsovet .su/metodika/5996 aktivnye I interaktivnye metody obucheniya

Դասապլան-1				
Ուսուցիչ՝	Արգիշտի Եղիազարյան			
Առարկա՝	ՆԶՊ	Ամսաթիվ 19,09,23թ	Կիսամյակ 1-ին	Դասարան 9^{ա}
Թեմա՝	Հաղթական ճակատամարտեր			
Օգտագործվող նյութեր՝	ՆԶՊ դասագիրք 9-րդ դասարանի համար, էջ 9-17 :			
Դասի նպատակը՝	Տեղեկություն տալ Հայոց հազարամյակներ առաջ տեղի ունեցած հաղթական ճակատամարտերի մասին՝ նշելով մի շարք հաղթական ճակատամարտեր: Ներկայացնել Խոշաբի, Արածանու, Ձիրավի, Ավարայրի, Ներսեհապատի և Հալիձորի ճակատամարտերը: Բացատրել ճակատամարտերի առանձնահատկությունները: Ներկայացնել ճակատամարտերում կիրառված մարտավարական հնարքները:			
Ուսուցման արդյունքներ, որոնք կվաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ				
Վերջնարդյունքներ՝	Կարողանան թվարկել Հայոց հազարամյակներ առաջ տեղի ունեցած հաղ-թական ճակատամարտերից Խոշաբի, Արածանու, Ձիրավի, Ավարայրի, Ներս-եհապատի և Հալիձորի ճակատամարտերը՝ իրենց տարեթվերով և ամսաթվերով: Ներկայացնեն՝ ճակատամարտերի առանձնահատկությունները: Վերլուծեն ճակատամարտերում կիրառված մարտավարական հնարքները:			
Միջառարկայա-կան կապեր՝	Հայոց լեզու, Հայոց պատմություն:			
Կապը ՀՊԶ վերջնարդյունքների հետ	Հ-1, 3, 4, 6, 9, 10, 28, 30, 33, 48, 49, 52			
Գործողություններ (ժամ, տևողություն)	Կշռադատում 10 րոպե	Իմաստի ընկալում 20 րոպե	Հարցադրումներ 10 րոպե	Կիրառվող մեթոդներ

40ր	ՈՒնկնդրում են դասախոսությունը, կատարում են նշումներ ուսու-ցանվող նյութի վե-րաբերյալ, տալիս են հարցեր թեմայի վերաբերյալ:	Հանգամանալից բացատրում եմ դա-սը, պատասխան-ում առաջադրված հարցերին	Թվարկեք Հայոց հա-դթական ճակատա-մարտերից 5-6-ը ի-րենց թվերով: Ինչ գիտեք Խոշա-բի, Արածանու, Ձի-բավի, Ավարայրի, Ներսեհապատի և Հալիձորի ճակատ-ամարտերից: Ներկայացրեք ճակ-ատամարտերում կիրառված մարտա-վարական հնարք-ները:	Համագործակցային ,մտագրոհ, խճանկարի, ԳՈՒՍ
Անրադարձ Տնային աշխատանք 5 րոպե	Սովորել պատմել և պատասխանել առաջադրված հարցերին: Տետրերում գրառել վերը նշված ճակատամարտերը իրենց ժամանակաշր-ջաններով և հրամանատարներով:			

Դասապլան-2				
Ուսուցիչ՝	Արգիշտի Եղիազարյան			
Առարկա՝	ՆԶՊ	Ամսաթիվ 22,09,23թ	Կիսամյակ 1-ին	Դասարան 9ᵇ
Թեմա՝	Մայիսյան հերոսամարտեր			
Օգտագործվող նյութեր՝	ՆԶՊ դասագիրք 9-րդ դասարանի համար, էջ 20-24 :			
Դասի նպատակը՝	Ներկայացնել նկարագրված գործողությունների վայրերը և ժամանակա-շրջանները: Տեղեկություն տալ մայիսյան հերոսամարտերի մասին՝ ճշելով Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտերը: Բացահայտել հիմնական գաղափարը: Ներկայացնել հերոսներին: Զարգացնել սեփական կարծիքը արտահայտելու կարողություն:			
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ				
Վերջնարդյունքներ	Կարողանան ներկայացնե ճակատամարտերի առանձնահատկությունները: Ներկայացնեն ճակատամարտերի հիմնական դրվագները և գաղափարները: Հիմնավորեն սեփական տեսակետը: Վերլուծեն հրամանատարների մարտավարությունը:			
Միջառարկայա-կան կապեր՝	Հայոց լեզու, Հայոց պատմություն:			
Կապը ՀՊՁ վերջնարդյունքների հետ	Հ-1, 3, 4, 6, 9, 10, 28, 30, 33, 48, 49, 52			

Գործողություններ (ժամ, տևողություն)	Կշռադատում 10 րոպե	Իմաստի ընկալում 20 րոպե	Հարցադրումներ 10 րոպե	Կիրառվող մեթոդներ
40ր	ՈՒՆկնդրում են դասախոսությունը, կատարում են նշումներ ուսու-ցանվող նյութի վե-բաբերյալ, տալիս են հարցերն ու մեկնաբանությունները թեմայի վե-բաբերյալ:	Հանգամանալից բացատրում եմ դա-սը, պատասխան-ում առաջադրված հարցերին, վերլու-ծում առաջարկված տեսակետները:	Թվարկեք մայիսյան հերոսամարտերը: Ինչ գիտեք Սար-դարապատի, Բաշ-Ապարանի, Ղարա-ֆիլիսայի ճակատ-ամարտերից: Ներկայացրեք ճակ-ատամարտի հրա-մանատարներին: Ներկայացրեք ճակ-ատամարտի կիրա-ռված մարտավա-րական հնարքները:	Դասախոսություն, ցուցադրական
Անդրադարձ Տնային աշխատանք 5 րոպե	Սովորել պատմել և պատասխանել առաջադրված հարցերին: Տետրերում գրառել վերը նշված ճակատամարտերը իրենց ժամանա-կաշրջաններով և հրամանատարներով:			